

որովհետեւ դա ԺԱ-րդ դարից սկսած շատ մշակուած և շատ սիրուած որոշ գրական ճիւղի արտայայտութիւն է, իւր տեսակում լաւ օրինակ է համարուել և բացի այդ յիշեալ շրջանի ուշագրու և հարուստ լեզուական արտադրութիւն է: Թէ այդ ճառը իւր ժամանակին փափաքելի գրուածք էր և հետեւապէս նոյն շրջանի գրական ճաշակի փայլուն արտայայտիչներէն է, այդ իմանում ենք Յովհաննէս եպիսկոպոսի ճառի վերջում գրած ինքնագիր յիշատակարանից. «զի յոյժ փափաքմամբ ետու բերել զսա ի Հռոմկլաէն, զի չկայր յերկիրս. և ես ձեռամբ իմով գրեցի ի յոյժ վշտալիր աւուրս»:

Վարդան պատմագիրը Հայոց տառերի գիւտի մասին մի քանի մանրամասնութիւններ ունի, որ չկան հինգերորդ դարու հեղինակների մօտ, օր. թէ Գանիէլեան գրերը 22 էին և թէ գիւտը եղել է «ի լեառն Բալուայ». նոյնն ունի նաև մեր ճառի հեղինակը, աւելի մանրամասն. «Վարդանը իւր պատմութիւնը վերջացրել է 1265 թ. ք մօտաւորապէս այն ժամանակները, երբ գրուել է մեր ձեռագիրը, ուրեմն երբ Կարապետ եպիսկոպոսի ճառը արդէն հռչակուած էր. հետեւապէս կամ Վարդանն է ճառից օգտուել, կամ երկուսն էլ ընդհանուր աղբիւր են ունեցել»:

Ճառի գրելու թուականը յայտնի չէ, բայց նրա լեզուն մեզ միջոց է տալիս կանգ առնելու ԺԲ և ԺԳ-րդ դարերի վրայ, աւելի հին դժուար թէ գրուած լինի, իսկ վերջի սահմանը ձեռագրի

ա. Տես քննագիրը եւ իւր համապատասխան ծանոթութիւնը:

բ. Տես Զարթ. Հայկ. Հիւն դպրութիւնը էջ 719: